**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

idcarmenia@gmail.com

http://www.foi.am/hy/IDC/

---

# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ
## «Իրա մեդիքլ գրուպ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստատեսություն» ՓԲԸ-ի տեղեկատվական վեճի վերաբերյալ

ՀԱՎԵԼՎԱԾ 1



IRA MEDICAL GROUP(CJSC)
Radiotherapy Center

Իրա Մեդիքլ Գրուպ (ՓԲԸ)
Ռադիոթերապիայի կենտրոն

27.02.2023 թվական

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան,
Նորք, Գ. Հովսեփյան փող., 26 շենք

«ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ
Պետական գրանցման համար՝ 282.120.942315, ՀՎՀՀ՝ 00902513
Գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Ավան, Ավան Առինջ 3/8/2

Հարգելի՛ պարոն Մովսիսյան,

«ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ մասին մամուլում կատարվող հրապարակումների դիտարկման ժամանակ նկատել ենք 22.02.2023 թվականին youtube.am կայքում հրապարակված «Հարցազրույց Նարեկ Մանուկյանի հետ»

www.iramedical.com

Fanarjyan 29, Yerevan 0052, Armenia
Tel: +37460740742
+37460740743
+37410549995
Fax: +37460740741

ՀՀ, Երևան 0052, Ֆանարջյան 29
Հեռ. +37460740742
+37460740743
+37410549995
Ֆաքս. +37460740741

տեսանյութագրության՝[1] 20-րդ րոպեին «ԻՐԱ ՄԵԴԻԿԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ կողմից իրականացվող գործունեության մասին իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալներ են ներկայացվել:

Ուսումնասիրելով 1lurer.am կայքը[2] համոզվել ենք, որ նշված նյութը պատրաստվել է Առաջինի լրատվական ալիքի կողմից և հանդիսանում է ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն Նարեկ Մանուկյանի հետ Աննա Դանիելյանի հարցազրույցը, որը համապատասխանաբար նաև եթեր է հեռարձակվել Հայաստանի հանրային հեռուստաընկերության հեռուստաեթերով:

«ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն Նարեկ Մանուկյանի հետ Աննա Դանիելյանի հարցազրույց» հաղորդման ընթացքում պարոն Նարեկ Մանուկյանը կողմից կատարվել է իրականությանը չհամապատասխանող արտահայտություն առ այն, որ «ԻՐԱ ՄԵԴԻԿԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ կողմից շահագործվող սարքը չի ապահովում ոլորտի ժամանակակից բոլոր պահանջները:

Հիմք ընդունելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը և նպատակ հետապնդելով հերքել «ԻՐԱ ՄԵԴԻԿԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկությունը, խնդրում ենք լրատվության նույն միջոցով հրապարակել «Հարցազրույց Նարեկ Մանուկյանի հետ» հաղորդաշարի ընթացքում ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն Նարեկ Մանուկյանի կողմից «ԻՐԱ ՄԵԴԻԿԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ հասցեին կատարված արտահայտությունների վերաբերյալ «ԻՐԱ ՄԵԴԻԿԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ պատասխան հերքումը ըստ ներքոշարադրյալի (առանձնացված են չակերտներով).

«ԻՐԱ ՄԵԴԻԿԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ հիմնադրվել է 2017 թվականին և լիցենզավորված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից

---

[1] https://www.youtube.com/watch?v=[illegible]

[2] https://www.1lurer.am/hy/tv_program/[illegible]

արտահիվանդանոցային ուռուցքաբանական (ճառագայթային թերապիա (արտաքին)) բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ (Կ-ՔՕ-002358 լիցենզիա), արտահիվանդանոցային ճառագայթային ախտորոշիչ՝ ուլտրաձայնային (թիվ Կ-ՔՕ-002358 լիցենզիա) և ուռուցքաբանական բժշկական օգնության և սպասարկման (թիվ Կ-ՔՕ-002942 լիցենզիա) ծառայություններ մատուցելու համար:

«ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ կողմից ձեռք է բերվել Varian Cliniac IX 15 և ավել MeV(մեգաէլեկտրոնվոլտ) հզորություն ունեցող արագացուցիչը, որը համապատասխանում է ոլորտում ժամանակակից բուժման բոլոր պահանջներին, մասնավորապես,կենտրոնը միակն է Հայաստանում որտեղ Varian Cliniac IX գծային արագացուցչի միջոցով չարորակ նորագոյացությունների բուժումը իրականացվում է ինտենսիվությունը մոդուլացնող ռադիոթերապիայի մեթոդով (IMRT), բուժման 3 D համալիր պլանավորում ECLIPSE համակարգով, տարբեր էներգիայի ֆոտոնային և էլեկտրոնային ճառագայթման զուգակցված կիրառման հնարավորություն, ցանկացած բարդության ճառագայթման դաշտերի ձևավորում Millennium 120 բազմաթերթ կոլիմատորային համակարգով : Varian Cliniac IX գծային արագացուցիչը տեղացի և արտասահմանցի հավաստագրված մասնագետների կողմից պարբերաբար ենթարկվում է տեխնիկական սպասարկման և ծրագրային թարմացման: Վարիան Մեդիքալ Սիսթեմս ընկերությունը վարում է այնպիսի քաղաքականություն, որ երբ թողարկվում է գծային արագացուցիչների ծրագրային թարմացումները, այդ թարմացումները տարածվում են բոլոր գծային արագացուցիչների վրա՝ անկախ սարքերի գտնվելու երկրից և վայրից, որի արդյունքում գծային արագացուցիչը մշտապես գտնվում է միջազգային չափորոշիչներին համապատասխան տեխնիկական և ծրագրային ընդունելի միճակում:

2022 թվականին «ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ ձեռք է բերել Varian Unique գծային արագացուցիչը, որը նախատեսված է նորագոյացությունների բուժման համար, և այս գծային արագացուցիչի միջոցով հնարավոր է իրականացնել ծավալային մոդուլացված աղեղային թերապիա, որը ապահովում է թիրախային բուժում (VMAT,daynamic Wedge): Արագացուցիչը ունի հնարավորություն ավելի քիչ

*ճառագայթելով բուժառուին՝ վերարտադրել բարձր որակի նկար, ինչպես նաև հնարավոր է բուժառուի դիրքի ստուգում հեռահար ճանապարհով: Varian Unique գծային արագացուցիչը «ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ կողմից վարձակալած բունկերում տեղադրելու համաձայնություն ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնը առ այսօր չի տվել:*

Ակնկալում ենք, որ «ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ պատասխան հերքումի հրապարակումը չի գիջի այն տեղեկատվության հրապարակմանը, որին վերաբերվում է:

Հարգանքով,

«ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ տնօրեն

Շանթ Շահնազարյան